

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

#### Հարգելի պարոն Սաղաթեյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ, 70-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-120-30.08.2017-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման կամ ծախսերի ավելացման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի սեպտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից գեկուցող) նշանակելու մասին» N 1091-Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈ-  
ԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-120-30.08.2017-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ներկայացված նախագծով քննարկվող գործող օրենքի հոդվածները թողնել անփոփոխ՝ նկատի ունենալով հետևյալ հանգամանքները՝

1. Շրջանառության հարկի համակարգի ներդրումից ի վեր փոքր և միջին տնտեսվարող սուբյեկտների մոտ իրացման շրջանառության իրական ծավալները թերհայտարարագրելու միտում է նկատվում, քանի որ մտավախություն ունեն, որ կարող են իրացման շրջանառության ցուցանիշով մոտենալ շրջանառության հարկի շեմին, գերազանցել այն և հայտնվել հարկման ընդհանուր համակարգում: 2015 թվականին էլ այս մտավախությունն առկա էր, և դա էր նաև այն հիմնական հիմնավորումներից մեկը, որի պատճառով կատարված օրենսդրական փոփոխությամբ շրջանառության հարկի շեմը շուրջ 2 անգամ բարձրացվեց՝ ակնկալելով, որ ՓՄՁ-ի սուբյեկտները կփոխեն իրենց վարքագիծը և կսկսեն հայտարարագրել իրենց իրացման իրական շրջանառությունները: Արդյունքը, սակայն, եղավ այն, որ փոքր և միջին տնտեսվարող սուբյեկտներն այդպես էլ չփոխեցին իրացման շրջանառության իրական ծավալները: Կարծում ենք նշվածը կարող է ունենալ երկու պատճառ՝

1) մինչև ԱԱՀ-ով չհարկվող շեմի փոխությունները հայտարարագրվող իրացման շրջանառությունները համապատասխանում էին իրականությանը, հետևաբար ԱԱՀ-ով չհարկվող շեմի փոփոխությունը տնտեսվարող սուբյեկտների համար որևէ էական խնդիր չի լուծել:

2) տնտեսվարող սուբյեկտները շարունակում են ակնհայտորեն թերհայտարարագրել իրենց իրացման շրջանառությունները՝ անգամ շրջանառության հարկի շեմին մոտենալու և շեմը գերազանցելու որևէ ռիսկ չունենալու պարագայում:

Գտնում ենք, որ երկրորդ դիտարկումն իրականությանն առավել մոտ է, քանի որ մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, օրինակ, տոնավաճառներում առևտրական գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների իրացման շրջանառության միջին ցուցանիշը 2016 թվականի տարեկան արդյունքներով կազմել է ընդամենը 3.7 մլն դրամ: Հետևաբար, նույնիսկ 58.35 մլն դրամ շեմի դեպքում ՓՄՁ-ի սուբյեկտներն իրենց իրացման շրջանառության իրական ծավալները հայտարարագրելու դեպքում չեն հայտնվի ընդհանուր հարկման դաշտում, քանի որ մեր կողմից ուսումնասիրված՝ համեմատաբար խոշոր տոնավաճառներում առևտրական գործունեությամբ զբաղվող 785 տնտեսվարող սուբյեկտներից 770-ը կամ որ նույնն է՝ 98 տոկոսը, կարող են իրենց իրացման շրջանառություններն ավելացնել շուրջ 25-28 անգամ և, այդուհանդերձ, շարունակել գործել շրջանառության հարկի համակարգում: Վերոգրյալը հաշվի առնելով՝ կարելի է փաստել, որ շրջանառության հարկի շեմի բարձրացման առաջարկությունն ընդամենը հսկիչ-դրամ-

արկղային մեքենայի կտրոն չտրամադրելու վարքագիծն արդարացնելու միջոց է, որը որևէ հիմնավորում ունենալ չի կարող:

2. Շրջանառության հարկի շեմի բարձրացումն ի սկզբանե հանդիսացել է որպես ժամանակավոր քայլ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ, եթե կարճաժամկետ հեռանկարում կամ անցումային որևէ ժամանակահատվածում շրջանառության հարկի բարձր շեմը կարող է որոշակիորեն հիմնավորված լինել, ապա երկարաժամկետ հեռանկարում այսպիսի բարձր շեմի կիրառությունը որևէ կերպ արդարացված չէ, ինչը հիմնավորվում է հետևյալ նկատառումներով՝

1) պետությունը չի կարող երկարաժամկետ հեռանկարում հարկային եկամուտների ապահովման ռազմավարությունը կապել շրջանառության հարկի համակարգում գործող հարկ վճարողների հետ.

2) շրջանառության հարկի բարձր շեմի կիրառության պարագայում, ըստ էության, կինաստագրկվեն հարկային օրենսգրքով ամրագրված այն բոլոր բարելավումները, որոնք առավելապես նախատեսված են հարկման ընդհանուր համակարգում գործող հարկ վճարողների համար.

3) շրջանառության հարկի շեմը, ըստ էության, պետք է ծառայի միայն միկրոձեռնարկատիրության սուբյեկտների համար, և միայն այս խմբի հարկ վճարողները պետք է գործեն հարկման արտոնյալ պայմաններում, իսկ ՓՄՁ-ի սուբյեկտները և մնացած ավելի խոշոր հարկ վճարողները պետք է գտնվեն հարկման հավասար ու միատեսակ պայմաններում, քանի որ հարկային համակարգում անհավասարությունն ստեղծում է բարդ ու անլուծելի խնդիրներ, այդ թվում՝ կապված հարկումից խուսափելու ռիսկերի առաջացման հետ:

3. Շրջանառության հարկի ներկայումս գործող շեմն անփոփոխ թողնելու դեպքում ավելի կլարանա առանց այդ էլ լայնորեն տարածված՝ արտադրողներից ու ներմուծողներից կատարվող ձեռքբերումների դիմաց դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերից հրաժարվելու խնդիրը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ շրջանառության հարկի շեմի բարձրացումը իր առջև դրված նպատակին չի ծառայել: Մասնավորապես, եթե մինչև շրջանառության հարկի շեմի բարձրացումը փաստաթղթերից հրաժարվում էին առավելապես այն հարկ վճարողները, որոնք գտնվում էին մինչև 58.35 մլն դրամի միջակայքում, ապա շրջանառության հարկի շեմի բարձրացման պարագայում այդպիսի վարքագիծ են սկսել դրսևորել արդեն նոր՝ 58.35 մլն դրամից մինչև 115 մլն դրամ միջակայքում գտնվող ու մի քանի անգամ ավելի խոշոր տնտեսվարող սուբյեկտները:

4. Շրջանառության հարկի ներկայումս գործող շեմն անփոփոխ թողնելու պարագայում կտրուկ կընդլայնվեն նաև խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ արհեստականորեն տրոհվելու և շրջանառության հարկի համակարգից անհարկի ձևով օգտվելու հնարավորությունները: Մասնավորապես, եթե շրջանառության հարկի ներկայումս գործող շեմի պայմաններում, օրինակ, տարեկան կտրվածքով 200 մլն դրամ շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտը շրջանառության հարկի համակարգից օգտվելու համար կարող է պարզապես բաժանվել 2 առանձին տնտեսվարող սուբյեկտների, ապա շրջանառության հարկի 58.35 մլն դրամ շեմի պայմաններում, նշվածը 200 մլն դրամ

շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտի տրոհվելու հնարավորությունները գործնականում շատ սահմանափակ են դառնում, քանի որ շրջանառության հարկի համակարգից օգտվելու համար այդ տնտեսվարող սուբյեկտը պետք է բաժանվի 4-5 տնտեսվարող սուբյեկտների:

5. Շրջանառության հարկի ներկայումս գործող շեմի անփոփոխ թողնելը չի հիմնավորվում նաև միջազգային փորձի տեսանկյունից: Մասնավորապես, շրջանառության հարկի շեմի վերանայման՝ նախկինում ներկայացված առաջարկությունների կապակցությամբ բազմիցս հայտնել ենք, որ Հայաստանի Հանրապետությունում կիրառվող շեմն աննախադեպ բարձր է ոչ միայն տարածաշրջանային, այլ նաև եվրոպական երկրներում կիրառվող նմանատիպ շեմերի համեմատությամբ:

6. Ինչ վերաբերում է նախագծի ընդունման հիմնավորման մեջ նշված այն տեսակետին, ըստ որի հարկային օրենսգրքով սահմանված շրջանառության հարկի 58.35 մլն դրամ շեմը նույնիսկ չի համապատասխանում «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված գերփոքր տնտեսվարող սուբյեկտներին, ապա այդ կապակցությամբ պետք է նկատի ունենալ այն, որ նշված օրենքով սահմանված չափորոշիչները կիրառելի են առավելապես ՓՄՁ-ի սուբյեկտներին պետական աջակցության գործիքակազմի ընտրության ու հասցեականության ապահովման առումով տնտեսվարող սուբյեկտներին տարբերակելու և խմբավորելու համար, ինչը հարկման համակարգերի մշակման ու ներդրման հետ որևէ ուղղակի կապ չունի:

7. Վարձակալական վճարների մասով լրացուցիչ եկամտային հարկ վճարելու շեմը 115 մլն դրամը սահմանելու առաջարկության կապակցությամբ հայտնում ենք, որ առհասարակ առաջարկությունը հասկանալի չէ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծի հիմնավորմամբ ներկայացված՝ նախագծի նպատակադրումները որևէ առնչություն չունեն նշված առաջարկության հետ: Բացի դրանից, հարկ ենք համարում նշել, որ վարձակալական վճարների մասով 58.35 դրամը գերազանցող գումարներից լրացուցիչ եկամտային հարկ հաշվարկելու դրույթը բխում է հարկման ուղղահայաց արդարության սկզբունքից և բարձր եկամուտները համարժեք հարկելու նպատակադրումից:

Ամփոփելով նշվածը՝ հայտնում ենք, որ նախագծի ընդունումը ոչ միայն չի նպաստի նախագծի առջև դրված նպատակների իրականացմանը, այլև կհակադրվի ստվերային շրջանառությունների դեմ պայքարի իրականացվող քաղաքականությանը, կնպաստի ստվերի խորացմանը, կհանգեցնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հարկային եկամուտների չարդարացված կորուստների, կստեղծի գործունեության անհավասար պայմաններ և միջազգային փորձով չհիմնավորված տնտեսական իրավիճակ, պետությանը կզրկի իրական ՓՄՁ ձևավորելու և նրանց հասցեական աջակցություն ցուցաբերելու հնարավորությունից:

8. Առաջարկում ենք նկատի ունենալ, որ նախագծում օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես՝

1) նախագծի 1-ին և 4-րդ հոդվածներում անհրաժեշտ է «կետի» և «ենթակետում» բառերը համապատասխանաբար փոխարինել «մասի» և «կետում» բառերով՝ համաձայն Հայաստանի

Հանրապետության հարկային օրենսգրքի 59-րդ, 255-րդ հոդվածների և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջների.

2) նախագծի 2-րդ, 3-րդ և 5-րդ հոդվածներում «կետում», «կետի» և «կետն» բառերն անհրաժեշտ է համապատասխանաբար փոխարինել «մասում», «մասի» և «մասն» բառերով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 150-րդ, 254-րդ, 455-րդ հոդվածների և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջների.

3) նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետի կապակցությամբ հայտնում ենք, որ անհրաժեշտ է հստակ նշել, թե օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի կոնկրետ որ բառերից հետո նախատեսված «58.35» թիվն է նախատեսվում փոխարինել «115.0» թվով, իսկ «թվերը» և «թվերով» բառերը համապատասխանաբար փոխարինել «թիվը» և «թվով» բառերով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի պահանջների.

4) նախագծի 6-րդ հոդվածով նախատեսված օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետն անհրաժեշտ է վերանայել՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 444-րդ հոդվածով սահմանված օրենսգրքի ուժի մեջ մտնելու ժամկետը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի  
Հանրապետության պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման  
կամ ծախսերի ավելացման մասին

Նախագծով առաջարկվում է՝

1) շրջանառության հարկ վճարող համարվելու շեմը 58.35 մլն դրամից բարձրացնել մինչև 115 մլն դրամ.

2) սահմանել, որ հարկային տարվա ընթացքում ստացված վարձակալական վճարների հանրագումարը 115 մլն դրամը գերազանցելու դեպքում է գերազանցող մասի համար հաշվարկվում լրացուցիչ եկամտային հարկ՝ 10 տոկոս դրույքաչափով (ներկայումս սահմանված 58.35 մլն դրամի փոխարեն):

Հաշվի առնելով նշվածը՝ հայտնում ենք, որ նախագծի ընդունման հետևանքով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտները կարող են նվազել 15-20 մլրդ դրամով:

Պ-120-30.08.2017-ՏՀ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ**

**ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 59-րդ հոդվածում

- 1) 1-ին կետի 5-րդ ենթակետում «58.35» թիվը փոխարինել «115.0» թվով
- 2) 2-րդ կետի 1-ին ենթակետում «58.35» թիվը փոխարինել «115.0» թվով
- 3) 2-րդ կետի 2-րդ ենթակետում «58.35» թվերը փոխարինել «115.0» թվերով
- 4) 2-րդ կետի 3-ին ենթակետում «58.35» թիվը փոխարինել «115.0» թվով

**Հոդված 2.** Օրենսգրքի 150-րդ հոդվածի 7-րդ կետում «58.35» թիվը փոխարինել «115.0» թվով

**Հոդված 3.** Օրենսգրքի 254-րդ հոդվածի

- 1) 2-րդ կետում «58.35» թիվը փոխարինել «115.0» թվով
- 2) 3-րդ կետի 6-րդ ենթակետում «58.35» թիվը փոխարինել «115.0» թվով

**Հոդված 4.** Օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում «58.35» թիվը փոխարինել «115.0» թվով

**Հոդված 5.** Օրենսգրքի 455-րդ հոդվածի 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել

**Հոդված 6.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

### ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

#### «ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍՊՐՔՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Նախագծի նպատակը ՀՀ-ում մեծ թվով փոքր տնտեսվարողությունների համարառավել բարենպաստ հարկային միջավայրի սահմանումն է՝ շրջանառության հարկի շեմի բարձրացման միջոցով:

Նոր հարկային օրենսգրքով նախատեսված շրջանառության հարկի 58.35 մլն դրամ տարեկան շրջանառության շեմը, որը գործելու է 2019 թվականից, չի ընդգրկում նույնիսկ «Փոքր եւ միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանված գերփոքր առետրային կազմակերպություններին եւ անհատ ձեռնարկատերերին: Բացի այդ՝ 58.35 մլն դրամ տարեկան շրջանառության շեմի սահմանման ժամանակաշրջանում ՀՀ-ում տնտեսության վիճակն այլ էր: Տարբեր էին ինչպես իրացման շրջանառությունները, այնպես էլ արտարժույթի փոխարժեքը. այդ ժամանակաշրջանում 58.35 մլն դրամը համարժեք էր շուրջ 200 հազար ԱՄՆ դոլարին, որի ներկայիս արժեքը տատանվում է 100 մլն դրամի շուրջ:

Հարկ է նշել, որ վերջին մի քանի տարիների ընթացքում փոքր եւ միջին ձեռնարկատիրության հարկման կառուցակարգերում կատարվել են մի շարք փոփոխություններ՝ սկսած շրջանառության հարկի դրույքաչափից, մինչեւ շրջանառության հարկի շեմի փոփոխություն: Այդ փոփոխությունները կարող են դրական ազդեցություն ունենալ երկար ժամանակահատվածում, երբ տեսական ժամանակ ձեռնարկատիրական միջավայրում խաղի կանոնները չեն փոխվում, իսկ տնտեսվարող սուբյեկտը կարողանում է հստակ պլանավորել իր քայլերը: Այս առումով եւս՝ ՀՀ փոքր ձեռնարկատիրության ոլորտում արդեն հայտնի եւ ընդունելի համարվող շրջանառության հարկի 115 մլն դրամ շեմի իջեցումը 58.35 մլն դրամի կարող է բացասական ազդեցություն ունենալ այս ոլորտում տնտեսական ակտիվության վրա: